անդամ Ստ. Մամիկոնեանի, Վրաստանի կողմից՝ արտ. գործ. նախարար Ե. Գեգեչկորիի, ներք. գործ. նախ. Ն. Ռամիշվիլիի, և ելևմտական նախարար Կանդելակիի. Ադրբէջանի կողմից՝ վարչապետ՝ Խան Խոյսկին, Թիֆլիսի դիւ. ներկ. Մ. Ջաֆարովի և Խաս-Մամեդովի. Լեռնականների Միութեան կողմից՝ Կանտեմիրովի, Բուգդայևի և Պանգուրայևի:

Խորհրդաժողովը տևեց աւելի քան 3 շաբաթ, բայց և ո՛չ մէկ հարցի շուրջ համաձայնութեան չեկաւ: Օրակարգի հարցերն էին՝ սահմանաբաժանման խնդիրը, քոչը, գաղթականութեան վիճակի կարգադրութիւնը, հաղորդակցութեան ու ելևմտական միջոցները, դիւանագիտական ու պաշտպանողական համագործակցութիւնը և այլն: Բոլոր հիմնական հարցերը համարեա առաջ բերին տարակարծութիւն, և խորհրդաժողովը ցրուեց անարդիւնք: Խորհրդաժողովի ընթացքում աւելի որոշ դարձաւ Կամաւորական Բանակի սպառնալիքը Կովկասին, և վրացիներն ու ադրբէջանցիները դրին զօրավար Դենիկինի դէմ զինակցութիւն կնքելու առաջարկը: Հայերը մերժեցին: Այն ժամանակ, վրացիներն ու ադրբէջանցիները կնքեցին առանձին դաշինք, որով կողմերը պարտաւորւում էին, ռուսական յարձակման պարագային, մէկ մէկու զինուորական աջակցութիւն ցոյց տալ: Դաշինքի կնքումից յետոյ Թիֆլիս եկաւ Ադրբէջանի զինուորական նախարար զօր. Մեխմանդարովը և տեղի ունեցան աղմկոտ ցոյցեր վրաց-ադրբէջանեան բարեկամութեան մասին:

Այդ առթիւ, արտ. գործ. նախ. Ս. Տիգրանեանը գրում էր իր 1919թ. յունիս 16 զեկուցման մէջ. «Մդիվանին օրեր առաջ ասել էր, թէ՝ եթէ հայերդ չզիջէք, մենք ստիպւած կը միանանք թաթարների հետ: Մեր քաղաքական գործակցութեան անհրաժեշտութիւնը մերժել էին, իսկ մեր չէզոքութիւնը, առանց դաշնագրի ու կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բաւարար միջոցը գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների յարձակումներով ու սպառնալիքով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չէզոքացնելու մէջ (Ղարաբաղի, Օլթիի, Կաղզւանի, Շարուրի, Նախիջևանի դէպքերը): Եւ այն երևաց, երբ մենք՝ Հայաստանի մինիստրներս՝ անշուք և անուշադիր մեկնում էինք Թիֆլիսի կայարանից, նոյն կայարանում Վրաստանի մինիստրները պատուի պահակով, երաժշտախմբով, շքով դիմաւորում էին Թիֆլիս ժամանող զօր. Մեխմանդարովին՝ Ադրբէջանի զօրական մինիստրին»:

Սեպտ. 17-ին, Թիֆլիսում, բացւեց հայ-վրացական մի նոր խորհրդաժողով՝ բաղկացած Ն. Ռամիշվիլիից, Ս. Մդիվանիից ու Կ. Սաբախտարաշվիլիից (Վրաստան) և Ստ. Մամիկոնեանից, Ս. Խաչատրեանից ու զօրավար Քիշմիշեանից (Հայաստան): Օրակարգի հարցերն էին. 1) Թրանզիտ, 2) երկաթուղային շարժական միջոցների բաժանում, 3) անդրկովկասեան դոյքերի բաժանում, 4) հպատակութեան հարց, 5) Հայաստանի պետական վարկային գործողութիւնների կատարում Թիֆլիսում և 6) մաքսային արգելքների վերացում:

Նորից ու նորից չատ երկար քննութեան ու վիճաբանութեան առարկայ դարձաւ սահմանային հարցը: Այս անդամ կողմերը որոշ զիջումներ արին, բայց համաձայնութիւնը նորից մնաց անհասանելի: Վրացիները յայտնեցին,